

# ՈՒՐՈՒԱԳԻԾ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

Ի ՍԿԶԲԱՆԷ ՄԻՆՉ

ՅԱՐԺԱԿՈՒԽԵ ՀԱՐՍԱՈՒԹԻՒՆՆ

Գամբրաց կամ կիմերեանց՝ խալղեանց տիրելն հաւանական չէ, զի ինչպէս ի պատմութեան պիտի տեսնեմք 7ՇՇ դարուն (Ն. Ք.) Ակիւթական՝ արշաւանցի ատեն ի Փոքր Ասիա էլն, անոնց զարնուեցան ու խառնուեցան և ի միասին վուշնուեցան կիացարէն։

Արմէններու Փոփուգացոց հետ Մակեդոնիայէ զալուստն կը վկայեն հին պատմագիրք, որպէս յիշատակեցինց, և առ այդ ապացոյց է նաև թեսադիոյ Ալրմէնին բաղաքը։ Իսկ Լեհման զիրմէնս կիմերեանց ցեղակից և ընկեր կարծելուն զիմաւոր ապացոյցն է այս վերջնոց Փոքր Ասիոյ գլխաւոր մայրացաղաքին՝ Ալինորի մօտ

Արմէնին բաղաքի մը գոյութիւնն, որպէս և իրենց միւս կեզրոնին թիւթանիոյ Արմինին (Արմէնիոնի աղաւաղումն) լեռն։ Սակայն ընդունելով հանդերձ այդ տեղեաց Արմէններու կողմանէ անուանութիւն՝ զԱրմէնս Փոփուգացոց ցեղակից կը համարիմք, զի Փոփուգացից ևս՝ կիմերեաններէ առաջ՝ այդ կողմերն գտնուած են, ուստի և զորքա Արմէններու անցած տեղերն կը ցուցնեն։ Կան և այլ աշխարհազրական անուններ, որպէս Ալիս գետի անունն զորքա Արմէններն տուած են, անոր ջրի աղիութեան համար զայն աղի, ալի և վերջապէս Ալիս անուաննելով։ Ալիսի բղիած լեռն Արմէնին կ'անուանէ Հերոդոտ։

1. Ակիւթիան այսօրուան իրումանիոյ և Փամիրի միջնեւ ճառուած և Այս ծովքն 20 օրուան ճամբայ դէպի հիւսիս տարածուող երկիր մ'էր։ Սկիւթացիք երեք զլիաւոր ցեղերու կը բաժնուէին։ Սկոյուգները՝ արմաններն կողմը, Հակերը՝ Ալրելս, իսկ Սամօմիթերն երկութիւնն միջէւ։ Ալիւթացիք իրանական ժողովուրդ մ'էն և ոչ թէ Խոնկու։ Դարմահասակ և մասոււ էին։ Ըստ Հերոսոսի, Թափառական ժողովուրդներն են ասուուք. առաջ հաստատու ընակութեան, և տեղուց մը մարգարտնին սպասմամբ այլուր կը տեղափոխուէին։ Չորս կամ վեց անիւու կառաքերու մէջ կը բնակէին, ուր 2-3 սենենակներ կը շինէին, այդ կառքերը 2-3 դոյզ ենենքով կը դարէին։ Տեղափոխութեան աստեն կանայք և տղայք կառքերու մէջ կը մայիսն, իսկ այլերն ձի նստած իրենց ովաբարաց երամերն կ'առաջնորդէին։ Լաւ ձի կը նստին, քաջ որսորդ և պատերազմիկ էին։ Թշնամույն զանկով զինի կը խմէին, ու անոնց մազքն իրենց ծից թամբին վրայ կը հաստատէին։ Գլխաւոր սնունդնին էր եփած միւ, ձմռէ կաթ և այս կաթով պատրաստուած պանիր։ Մենուցոց մարմինն ժողովրդեան մէջ կը պատցնէին։ Թագաւորքնն զմունելի նաքը օրենքով երկրին մէջ լրջան ընել կուտայք, այդ առթիւ խրախնաճութիւններն է՛ընէին, ձիեր կը զոնէին, և այս իսկ ժողովրդէն

ումակը իրենց քիթն, ականջն, մատն ևն. կը կտրատէն, վերջապէս քառանկինի գերեզմաններու մէջ կը թաղէին։ Իր կիներէ միոյն հատշատ մը ծառաներն և ձիեր ալ կը զոնէին գերեզմանին վրա։ Անուան տարնդարձին 50 ծառաներ են կը զոնէին։

Սկիւթացիք բազմաստուածեան էին, սակայն ոչ ասմար ունէին և ոչ արձան կամ պատկեր։ Գլխաւոր աստուածութիւննին պատերազմի Արյուն աստուած էր. զոր կանգնածած տորի մը ձմին տակ կը պաշտէին, և որոյ ձիեր ու մարդկէ կը զոնէին (ընհանրապէս 100 բանտարկեաններէ մին), նաին անոր բազուկներն կտրելով՝ արիւնով նուիրական տորն կ'օծէին։ Հուրն և տարբերն ալ կը պաշտէին։ Կախարդներն մնել յարգ ունէին Սկիւթիոյ մէջ։

Նամիրամ իբր թէ տիրաս է Սկիւթացոց։ Տեսանք թէ Սկոյուգներն հալածեցին կիմերեաններն՝ որք ապա Ալիա անցան։ Սկիւթական զաղութեր հաստատուեցան ի հիւսիսաղովմն խալդիոյ, որպէս Արքանազեաններն, Գլուքարք ևն. որք միանալով լոր գարուն Արևմեծան Ալիան ծածկեցին ժամանակ մը ու կիսասարէն հալածուեցան։ Դարեւն ծ13ին անոնց վրայ երթալով փախան ու մնձ փառ պատճեցին։ Արմիննեաք անոնց դաշնակցեցան։ Աղեքսանորի մի բանակն կոտրեցին։

իրիսի ճիւղերէ մին (Փոնտական գետակ) զրո Յոյներն լուրոս կ'անուանէին՝ Արմէնք իրենց բարբառով զայն Գայլ գետ կոշած են։ Ալիսի վերին աւազանն և ապա Մելիտինէի կողմերն Արմէնիա եղած է գրեթէ երբեմ (Մարտերօ)։

Արմէններն ի Փոքր Հայս (ընդ մէջ կապաղովկիոյ և Պոնտոսի) մտած ըլլալու չեն մինչ Ժ. դար (Ն. Ք.), զի այդ դարուն Ասորեստանեայց Թագաւորն Թաղաթ Փալասար Ա. որ այդ կողմէներուն տիրեց՝ չյիշատակեր զԱրմէններն։ Սակայն Խալդիներու թագաւորին Մինուաշի (828-784) Մալաթիոյ մէջ թողած մէկ արձանագրութեան մէջ կը տեսնամբ զայնս խամաճի, կամ Ասմէկի անուան տակ (Լեհաման 1901)։ Ուստի Փոքր Հայց մուտքերնին տեղի ունեցած է Դրու դարուն։ Արդէ կամ Թուղմէս Գ. ի Բնեկենը Արմէնիան չէ, և կամ Թաղաթ Փալասար մոոցած է զանոնք յիշատակել, առաջինն աւելի հաւանական է։ Ինչ որ ալ ըլլայ Արմէններն Մալաթիոյ կողմէրէն Ծոփաց աշխարհի ճամբով Մեծ Հայց մտած են։

Արմէններն ի Փոքր Հայս գտնուած ատենին անշուշտ խառնուեցան Փոհւզացւոց, Քեթացւոց, ապա Կիմմերեանց, ու Սկիթացւոց հետ, և արդէն այս Երկրաց մէջ զանուած հին ոսկերոտիք ու զանկերն մարդարանական տեսակէտով խառնուրդ մը կը ցուցնեն, և որ անդ բազմազան ցեղերու զոյութեան հետևանքն է։

Բայտ Վիորօֆի ի Պօղազ — Քէօ հաւա-

քեալ վաղեմի Փոհւզացւոց գանկերն շատ նման են Արմէններու (Հայոց) գանկին, այսինքն Արիական են, կարճազլուխ (Brachycéphale)։

Արմէններն Եփրատն անցած են 7րդ դարուն, հաւանականարար հալածուելով Քեթացիներէ և Գամեններէ։

Արմէններն դանդաղարար մուտք գտած են և ոչ թէ զէն ի ձեռին, ու երկրին հինքնակշաց (Ալորոտեանց, Աւրաբտեանց կամ Խալդեանց) տեղն բռնած են, հալածելով զանոնց դէպի հիւսիք՝ կովկասեան լեռնաշղթայն։ Այդ կողմէներու (արեւմտեան հիւսիսի) մի նահանգն որ աւելի հոծ էին Խալդեանք՝ անուանեցաւ Խարդիք։

Հերոզոսի ժամանակ Արմէններն կը գտնուէին Եփրատի արևելեան կողմի երկայնքն, ու Արածանիի արևմտեան աւազանն, և կը ներկայացնեն Պարմից 13րդ նահանգն, մինչդեռ Արորոտեաններն 18րդ նահանգին մէջ կ'իյնան (Պաղիրացւոց և Մութիէններու հետ)։

Արմէններն Եփրատն անցնելուն իրենց Եփրատայ արևմտեան երկրին Փոքր — Արմէկեի, իսկ Եփրատայ Արևելեան երկրաց Մեծ — Արմէկեի անունն տուին, նման Քեթացւոց, Փոհւզացւոց և Մարաց որք ու նէին Մեծ-Քեթացիք և Փոքր - Քեթացիք, Մեծ-Փոհւզացիք ու Փոքր - Փոհւզացիք, և Մեծ - Մարաց ու Փոքր - Մարաց բաժանութերն։

Ըստ Ելսաէնի այդ եկ ժողովուրդն Քեթացիներ կամ Հաղեաններ<sup>1</sup> են, որք 7րդ

1. Ի Սուրբ Գիրս յիշատակեալ Քեթացիներն, զորս այժմ Khitî, Khetî, Khatti, Kittite կ'անուաննեն Եւրոպացիք, և Վիէննայի Միթթարեանք ու իրենց հնուուրդ Հադինամ կը կոչեն։ Քեթացիք Սուրբոյ և Փոքր Աստոյ միշեն կարելոր իշխանութեան մեղած են երբեմն, մոռցուած էին։ զիտուն շնորհու Եզիպտական և Ասորեստանեան արձանագրութեանն, այս վերջին տարիներն։ Ըստ ոմանց Քեթացիք կովկասէն եկած ու նախ Կապաղովկին և անտի հիւսիսային Սուրբա ի Կիլիկիս հաստատուած են։ ըստ այլոց Սիմականներ են. այժմ աւելի կը հաւատան թէ՝ Փոքր Աստոյ յատուկ ազգ մէնն նը-

ման այլ տեղական ազգերու (Խալիք, Մուսաք, Թապալ, Խալդի) Ասիական անուանեալ ցեղի կը վերաբերին, ուստի և ոչ Արիականներ են և ոչ ալ Խմելականներ։ Ասոնց մի մասն Եգիպտոսի Հիւսիսո (Հովիք) թագաւորներն տարած են Մեռեան Ծոփու արևմտեան կողմին, զոր Փոյրիքիրացիներ կ'անուանէին Խիպատացիք, իսկ Հիւսիսի միջ մասն Խեծ-Գիրայիններ։ Փոքր Քեթացիներն Հրէից հետ խառնուեցան։

Մեծ Քեթացիք Եզիպտացիք աշխարհակալաց Թուգմէս Գ. ի, Ռամէս Ա. ի, Թամէս Բ. ի և Սիթի հետ չափուած են, ու քանից հաշտութիւն կազմած են զաշնակցութեամբ։ Քեթացիք իրենց սահմաններն ընդլայնած են մինչ Ցունական

դարուն (ն. Ք.) տիրելով այս երկրին և իրենց անուամբ (Հաթիօ) երկիրն ու ժողովուրդն յետ այնու անուանեցաւ Հատք կամ Հայք: Ենչսէնի այս կարծիքն ընդունուած չէ ընդհանրապէս, զի փաստերն անզօր են: Այս զաղութն Քեթացի չլըրնար ըլլալ, զի Սարգոն 717ին արդէն քանդակած է անոնց իշխանութիւնն և թէ այս ցեղի քաղաքակրթութեան և վիմամաղորշմ արձանազրութեանց հետքերն չեն տեսնուիր ի Մեծ Հայու:

Վերջապէս հաւանականարար այդ եկ ժողովուրդն Փոփրգիոյ կողմերէն կու գար որոյ վասն վկայեն արժանահաւատ պատմիչը: Հին պատմազիքը զմեզ Փոփրգացւց ցեղակից կը համարին ու լեզուաց մէջ մեծ հինամութիւն կը հաստատեն:

ԱՀերողոսոս Փոփրգացիներն ու Արմէններն համացեղ եղրայր կ'անուանէ, իսկ Դիրինիսիոս Աղիկառանացին համալեզու կը համարի. Եւտոքսիոս (յոյն) Հայերէնն և Փոփրերէնն նմանաձայն են, կ'ըսէ:

Հնախոսը Արմէններու ու Փոփրգացւց հագուստներն համանման կը համարին ընդհանրապէս որ ցեղակցութեան նշան մ'է: Քսերբասի ընդդէմ Յունաց պատերազմին՝ Արմէններն ու Փոփրգիք միենայն ձևով զինեալ էին:

Արշակեագոսն, և Փոքր Ասիոյ խորերն, Փոփրգիներէ քանիցոյ յետս մողուած են: Ոսամէս Գի տաեն կը ատկարանան և մանաւանդ Ալուրեստանէց ծաւալմանա ատեն կը յաղթուին ու կը հապտակին Թագլաթ Փալասարի (ԺԼ. Պար). Թիշ Վիրջ Փոքր ինչ կը զօրնան և յաղթութիւն մը կը տանին Ասորեստանէց վրայ. Սակայն Ասոր-Հազիքաբարը 877ին կը տիրէ անոնց և կարկամիջ հարուստ մայրաքափին կը Կողոպտէ, Սաղմանասար Գ. 858ին կրկին կը հպատակնէ զանոնք:

Քեթացիներն այլ ևս Ասորեստանն կը յարցնն, և միայն դէպ յԱրեւել Մալաթիոյ իշխանութեան վրայ պարբերաբար կը յարձակին և միշտ յետս կը մողուին. Սարգոն 717ին մայրաքափանին կը կործանէ, Մարաց և Պարսից կայսրութեան օրին բորոյդին կ'անետանան:

Քեթացիք զարգացեալ քաղաքակրթութիւն մ'ունէին չորսի Նեղանոսի և Ասորեստանէաց հետ շարունակական շփմանց հշանագրերով արձանագրութիւններ թողուցած են՝ գեռ անըն-

Հաւանականարար Արմէններն իրենց հետ քերին իրենց Փոփրգացւցինին նման այրուրդին՝ սերեալ ի փիւնիկականէ, որ յետ ժամանակ մը գործածութեան բարձիթողի եղաւ ու Մեծն Մեծորպ՝ Ե. Պարուն զայն գտնելով ու կատարելագործելով՝ ի գործածութեան դրաւ, և որ իր անունն կը կրէ այսօր: Ապագային կը մնայ այս կարծեաց վրայ վերջական մէիու արձակել:

Զեմք կրնար ընդունիլ սակայն թէ՝ այս եկ ժողովուրդն (Արմէններն) երկրին վաղեմի բնակչութիւնն ամրողջովին հալածելով դէպ հիւսիս՝ անոնց տեղն բնած ըլլան, անշուշտ աւագ մեծամասնութիւնն մնացած է անդ, և նորիկ ժողովուրդն խառնուած է անոնց հետ: Այդ եկերն ըլլան Փոփրգացի կամ կիմմերեանց երկուրդն ալ Արիկական՝ մէծ ընտանեաց վերաբերող ցեղեր են, առ այս ամեն ոք համաձայն է. սակայն զալով երկրի ընիկ հինաւուրց ժողովրդեան ցեղին՝ հեղինակներն տարակարծիք են: Ըստ ոմանց Մեմականց էին նորա, ըստ այլոց Արիկականց, ըստ այլոց բազմաց Փոքր Ասիոյ յատուկ Ասիական անուանեալ ցեղին կը վերաբերէն: Մեր պատմահայրն մեր առաջին նահապետն՝ Հայկ՝ Բարեկընչ եկած պատմելով՝ կարծես ոյժ կու տայ առաջին ենթազրու-

թեւնիկ՝ որք Եգիպտական նշանագրերէ եկած կը համարուի:

Քեթացացած մէջ արուեստ և գաճառականութիւն զարգացած էր, շատ հարուստ էին. Կրօնի Քանանացւց կը մօտենային, երկիրն Փոքր իշխանութեանց բաժնուած էր՝ որոց իշխաններն երկրին վենականին կը հապտակիէն:

1. Եր Կարծուէր թէ՝ Հնդկա-Եւրոպական ցեղի խանձարութ կերպնական կը նեղունական էր, սակայն նորանոր ուսումնասիրութիւններ և մանաւանդ էկողուաբանական գիւտեր կը ցուցնեն թէ՝ Հնդկա-Եւրոպական ցեղի վաղեմի ընագաւառն եղած է Տինէքեր և Վոլկա գնեսնուած աւագաներն են եղանական կը նորիկ հուզ մը դէպ Արեւելք երթալով՝ ծնունդ տուած է իրանեան և Հնդիկ ազգերու, և այլք դէպ Արևմտաւոր ուղղուելով կազմած են Լատիններ, Կենտուեր, Ցոյներն և Գիրմանեներն. Արևմտայց խումբն բաժնուելով Ասիա անցած են Փոփրգացիք և Արմէններն, որոց անջատութեանց տեղի ունեցած է բայ Շոէսուէրի Գրիմսնեներն 30 դար առաջ:

թեան, այս կարծեաց պաշտպանց իրենց իրերէ փաստ կը համարին Հայոցս կազմախօսական, լեզուական և կրօնական ինչ ինչ Անմական յատկութիւններն ու տարրերն, բայց այլք արդար իրաւամբ այդ ամենն ընական կը համարին երկու դրացի ժողովրդոց համար՝ որք զարաւոր առնչութիւններ ունեցած են, և ճետեաբար անզօր նախահայուն Անմականութիւնն ապացուցանելու Ամենէ հաւանական է որ այս օրուան Հայոց Խաղեաններու (Ասիական ցեղ) և Արմէններու (Արմական ցեղ) ժողովութիւններ է, ունենալով և Անմական արեան խառնուրդ:

Նախահայոց բոն ցեղն ստուգելու համար կարելի է դիմել Գանկաչափութեան: Արդարէ ումանց կարձագորիս (Brachycéphale) կը համարին զնախահայս, ինչպէս Արմական ազգերն, այլք երկարագործի (Dolicocéphale) կը կարծեն երկրին հին բնիկներն, ինչպէս Անմական ցեղերն. իսկ ուրիշներ մին թէ միւսն կը գտնեն հին զանկերու մէջ, և այս երկուցի խառնուրդ Միհյագրուխներ (Mésitocéphale) ալ, որով և անզամ մ'ես կը հաստատուի թէ՝ դեռ ժամանակն եկած չէ այս մասին վճիռ արձակելու: Մենք մի այլ գործի պատրաստութեան առթիւ պէտք ունեցանց գծել Փոքր Ասիոց ցեղերու մարդարանական քարտէն, առ այդ շատ մը մարդարան հեղինակաց գործերն թղթատեցինք, սակայն հնար չեղաւ մեզ մեր նպատակին համանելու: Այս գիտութիւնն որ շատ լոյս կրնայ սփուել մեր խնդրոյն վրայ, դեռ մեր ընագաւառի համար շատ ուսումնասիրուած չէ:

Մեր Հայ անուանակոչութիւնն ոչ ի վիմագրում արձանագրութիւնս տեսնուած է և ոչ ալ վաղեմի պատմագրաց մէջ յիշատակուած է, միայն Վրացիք զմեզ Հասկամ Հաս կ'անուանեն: Բայ Խորենացւոյ մեր ազգութեան հիմնադիր Հայկ<sup>1</sup> նա-

հապետի անուամբ Հայ կը կոչուինք, ուստի և այժմու և օտար պատմիչը շատ անզամ զմեզ Հայկեան (Haïkan) կ'անուանեն: Բայ ոմանց Խորի կամ Հայրի Աստուծոյ անունէն եկած է, և Հայրեն, Հայոց, Հայ եղած է: Բայ Եկէնսինի՝ ինչպէս տեսանց Քեթացւոց Հարիօ անունէն ելած է Հատր կամ Հայր:

Լեզուարանք կը կարծեն թէ՝ Հայի հայր կամ նախահայր կը նշանակէ, Հնդկա-Երրոպական Peter բառէն սերած ըստ լեզուարանական մի օրինաց, որով Ք գիրն Հայերէն Հ-ի կը փոխուի և Ե գիրն Ի-ի, որով Peter եղած է Հայ, Հայր, Հարք (անոն որ արուած է նախանեց բնագաւառուին) և Հայկ՝ Հայրին փաղացականն է ինչպէս Հայրիկ:

Շոէյտէս կ'ըսէ թէ Peter բառն գրեթէ նոյնութեամբ մացած է զետ բառին մէջ զօրացետ, բաղաքապիս ևն, Արմէններն Խալդիա մտնելով ինքզինքնին այն ժողովրդեան վետն կամ հայրէ անուանեցին իրը ազնիւ ցեղ և յորմէ մացած է Հայ անունն:

Մեր ընագաւառի Հայատան անուանութիւնն որոպէս է, և Պարսկի ազգեցութեան տակ կազմուած Հայ և Մրան (երկիր) պարսկերէն բառով. ինչպէս Քիւրտիստան, Լազիստան, Արագիստան, և որ հաւանականարար հրա դարէն սկսած եմք գործածել:

Յօտարաց և զուցէ նախարար մեզմէ Փոքր Արևելիա, Մեծ Արևելիա անուանակոչութեանց համապատասխան են Մեծ Հայր և Փոքր Հայր կոչութենք: Մեր Ազգ Պատմագիրը Ազաթանգեղոսէն սկսեալ և իրարմէ ընդօրինակելով Աստուածաշունչի Տունն Թորգումայ և Արքանազեան ցեղն իրը հումանիշ կը համարին մեր ցեղի, սակայն պացուցուած է թէ՝ Թորգումայ Տունն (Տօցօրմա) մասնաւոր երկիր մ'է Հայաստանի հարաւ արեելեան կողմն (Քի-

1. Մեր բայ Խորենացւոյ՝ նախահայր Հայկն հսկայ աղենաւոր մ'է նման Յունաց Օթրոնին, և որոյ վասն և Սուրբ Գրոց մէջ մեր նախնիք

փութ). Հաւանականարար սեպածե արձանագրութեանց Tilgarima ամրոցին կողմերն Աստուածաշունչ զրոց այս մասին միջնանի խօսքերն երբէց հակառակ չեն թուիր մեզ, զոր օրինակ Խզեկիլ «Ճունն Թորգումայ ի ծագաց հիւսիսոյ» կ'ըսէ (լ. 6), և այլուր Թորգումայ տունէն ձիեր ու ջորիներ ի Տիւրոս բերուիլն կը յիշատակէ (ին. 14), զի արդարեւ Թորգումեանց երկիրն Ասորեստանի համար հիւսիս էր, և թէ անդ որպէս ի մեզ ձիարուծութիւնն և ջորերուծութիւնն ծաղկած էր և այսօր իսկ է Խակ Ասքանազն (Askenas, Ashkonzař, Iskhonzař) Միննի մօտ Ակիթական փոքր իշխանութիւն մ'էր ինչպէս առիթ ունեցանք ըսելու:

Ահաւասիկ այս շփոթութեանց պատճառու, մեր առաջին քրիստոնեայ նախահարց թունդ կրօնասիկ՝ ուզելով իրենց ազգին ծագումն զտնալ ի Սուրբ Գիրս, Մննդոց զրբին մէջ առ այդ ունայն պրագումներէ ետք՝ կը տեսնան որ՝ իրենց ընագաւառի զրացի երկու փոքր ազգերու Ասքանազեանց և Թորգումեանց ծագումն զրուած է (Ծնն. ժ. 3 և Ա. Մնաց. Ա. 6). «և որդիք Գամերայ՝ Ասրանազ և Ինքար՝ և Թորգումայ», ուստի և կը համարին թէ, հայերն այս երկու զրացի ցեղերէն տարրեր ծնունդ չեն կրնար ունենալ, ուրեմն և Հայկն Թորգումայ զաւակն կը համարին<sup>4</sup>, որով Ասքանազ կ'ըլլայ Հայկայ Հօրեղապրըն, ուստի և Հայկայ սերունդն կը կոչեն Թորգումեան և ազգակից Ասրանազեանց: Միւս կողմանէ իրենց այս ենթագրութեան հաստատութիւն կը ցուցնեն Երեմիայի (ԾԱ. 27) «Պատուէր տուք յինէն Արարատեան թագաւորու-

թեանց, և Ասքանազեան գնդին» խօսքն, յորում կը տեսնեն Մ'արգարէին բերնօց Աստուածոյ հրամանն ուղղեալ Արարատեանց (իմա Թորգումեան տան՝ ըստ մեր նախնեաց) և Ասքանազեանց. այսինքն Գամերի երկու զաւակաց սերնդոց՝ ի կործանումն Բարելոնի:

Եանօթ է բանասիրաց թէ՝ այս հասուածն Երրայերէն բնազրին մէջ սապէս է<sup>5</sup>. «.... հրաւիրեցէր ի վերայ դորա զազաս, Կոչեցէր ի վերայ դորա զթազաւորութիւնս Արարատայ, Մինւոյ և Ասքանազայ....», յորում կը տեսնուի թէ՝ մարգարէն կոչ կ'ընէ ո՛չ միայն Արարատեանց և Ասքանազեանց՝ այլ և Մինւոյ երկրին որ Արարատեանց զրացի մի այլ Խալկեան իշխանութիւն էր: Ասքանազեանց անշուշտ զրացի են միւս երկու իշխանութեանց գուցէ և զաշնակից այն ատեն, և հաւանականար մարգարէն տեղեակ այդ կապակցութեան՝ զաշնակից իշխանութեանց կոչ կ'ընէ յանուն Եհովայի:

Կար և մի այլ Ասքանազեան ազգ (Ասկանիա) որ Փոփւզական ցեղ մ'է ի իիւթանիա, որոց Նախահայրն Ասքանազ երգուած է Հոմերէ: Այս Ասքանազեաններու անուամբ կայ զաւառ, զետ, լիճ, նաւահանգիստ և կզզեխումբ: Այս ցեղէն սերած է Փոփւզական իշխանական տունն: Փուցէ Արմէններն Փոփւզական Ասքանազ ազնուական ցեղէ սերած ըլլալու աւանդութիւնն ունէին իրենց մէջ, ու Աստուածաշունչ զրոց Ասքանազներն զանոնք կարծեցին, բայց ինչպէս զիտել տուինք, Մուրը Գրոց Երեմիայի Ասքանազներն Սկիթական ցեղ մ'էին և տարրեր Փոփւզական Ասքանազներէն, զուցէ Ծննդոց

### 1. Նոյի Յաբեթ որդւոյ զաւակն:

2. Ենթաթ անուամբ ժողովուրդ մը կայ Ռւալ Երանեց մէջ, որ ցոյց տայ թէ՝ Ակիթացւոց վաղեմի երկիրն այս կողմն էր. ուսկից եկած են Ասրանազեանք, Երեթեանք և զուցէ Թորգումեանք:

3. Եթէ Հայկն Աստուածաշունչ Գրոց Գամերայ զաւակ Յաբեթի որդին համարիմք, սա Նոյի թոռնորդին կ'ըլլայ, մինչդեռ ըստ Խորենաց,

ոյ Գամերի Թերաս որդւոյն զաւակն է Թորգում. որով և Հայկ Նոյի թոռան թոռն կ'ըլլայ: Այս Թերասն իշխանակուած չ'է Մուրը Գրոց մէջ: Այս խնդիրն մեր նիւթէն դուրս է:

4. Տես ի ծանօթութեան Աստուածաշունչի, հրատարակեալ Ամերիկեան Սուրբ Գրոց ընկերութեան կողմանէ, կ. Պօլս, 1895, Տպ. Պաղտատական:

Գրոց մէջ յիշատակեալ Ասքանազն այս  
վերջնոց կը վերաբերի :

\* \*

ի մի բան մեր բնագաւառի նախնի բը-  
նակիչը խալդեանք կամ Ալորտսեանք կ'ա-  
նուանուէին, որ հաւանականարար Ասիա-  
կան անուաննեալ Փոքր Ասիոյ ցեղին կը  
վերաբերէին: Արմեկ անուաննեալ Փոփլաց-  
ւոց ցեղակից Արիականներն Մ'ակեղոնիա-  
յէն Փոքր Ասիա անցան, ժամանակ մը  
Փոփլացի՝ ապա ի Փոքր Հայս (ընդ մէջ  
Լապաղովկիոյ և Պոնտոսի) մացին, Գա-  
մրաց ու Քեթացւոց հետ փոքր ինչ խառ-  
նուեցան, ու ապա Մ'ալաթիոյ կողմերն  
իջան և Խոփաց երկրին ճամրով Դու դա-  
րուն Մ'եծ Հայը մտան, տեղացիներն մա-  
սմբ դէպ հիւսիս հալածեցին, ու անոնց  
մացելոց հետ խառնուելով յառաջ եկաւ  
Արմէն կամ Հայ ազգն:

Հայատանի շրջակայ բնակչութիւնց  
հետզհետէ Հայացան ու Հայ ցեղին հետ  
խառնուեցան. արդարե Հայատանի հիւ-  
սիսակողման Սկիթացից ու համացեղ Ա-  
զուանք, Արեւելեան նահանգներու (Փայ-  
տակարանի, Սիրինիքի), և Պարսկանայոց  
Մար ու Պարսիկ ազգարնակութիւններն,  
հարաւ արևմտեան (Աղձնեաց), Ասորես-  
տաննեայց և արևմտեան գաւառաց (Բարձր-  
-Հայք, Ջորբորդ - Հայք, Փոքր - Հայք)  
Յոյներն՝ հետզհետէ Հայոց հետ խառնուե-  
ցան ու անհետացան: Եոյնն տեղի ունե-  
ցաւ և Արտաշատի, Երուանդաշատի, Վա-  
նի և Նախիջևանի Հրէտական կարևոր գա-  
ղութներու համար: Միայն հարաւի կոր-

դուից մասամբ միայն հայացան (Զազա),  
այլը պահեցին իրենց ազգութիւնն (այժ-  
մու Քիւրտերն):

Ն. ՏԱՂԱՒԱՐԵԱՆ  
Շարայարելի

Ն. ՏԱՂԱՒԱՐԵԱՆ

## Ո. Զ Գ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

### ԲԱԳՈՒԻ ՆԱՒԹԱՀԱՆՔԵՐԸ

ՃՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Բագուի նաւթահանքերը որ տնտեսա-  
կան աշխարհի մէջ այնքան միհ հըռ-  
շակ կը վայելեն այժմ, ինչ ծառայու-  
թեան մատուցած են հին ազգերուն:

Հանճարեղ կերպով պիտուած է՝ թէ  
Բագուն պէտք է կրակապաշտներու կրօնա-  
կան կեղրոն մ'եղած ըլլայ՝ ուր հուրը՝  
ինքնարուղիս և դիւրաբրորց՝ աւելի սար-  
սափ կարող էր ազգել, և թէ նոյն իսկ  
իր Բագու անունը յարաբերութիւն մ'ու-  
նենայ պարթևական Բագ (Աստուած) բա-  
ռին հետ:

Սակայն աստուածութիւնը հիներուն հա-  
մար արգելց մը չէր նոյն իրը պաշտելէն  
վերջ նաև ծառայեցնելու. կրակին կ'ա-  
զօթէին, բայց զայն գործածելով: Յար-  
զանքը երախտագիտութեան հետևանքն էր:

Արդ Բագուի նավթահանքերը գործնա-  
կանին մէջ ինչ արդիւնքով արժանացած  
են Հայոց պաշտամունքին:

Դիոն կասսիոս՝ հռովմայեցի պատմիչը  
իր Ա. գրքին մէջ կ'ըսէ, Հայերու վրայ  
խօսելով.

«Բարբարունները իրեն (Լուկուլլոսի) մէծ  
վեաս հասացին նետերով և հաւրով (նախուա)  
զոր կը բավկին մեքենաներու վրայ: Ասիլա-  
կպրային հիւր մըն է, այնքան դիւրավա՛-  
որ ինչ բանի դպի՛ ամրողապէս կ'այրէ,  
և ոչ մէկ հեղուկով կարելի է զայն մարել  
դիւրա»:

1. Պիտուած ոմանք այս անուեղի շփոթութե-  
նէն գերծ ննալու համար Բիւթանական Ասքա-  
նազներն Ասքան կ'անուաննեն, իսկ Սկիթա-  
կաններն Ասքեան:

Եթէ անոնց պատահական նմանութիւնն  
միննոյն ծուռնկն ընդունիլ հարկադրէր զմեզ՝  
պարա էիլիք Գերբանիոյ հիւսիսակողման մի գա-  
ւառ ևս Ասքանազնաց ցեղակից ընդունիլ, զի նոյն  
անունն կը կրէ, և երբեմն մասնաւոր իշխանու-  
թիւն մ'ալ ունեցած է այդ անուամբ: